Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Խաղաղվիր

Մի քանի տարի առաջ մի օր գրասենյակում հարցերը կարգավորելուց հետո ես ուժեղ զգացողություն ունեցա այցելելու մի ծեր այրի կնոջ, ով Սոլթ Լեյք Սիթիի ծերանոցում էր: Ես գնացի ուղիղ այնտեղ:

Երբ ես գնացի նրա սենյակ, ես այն դատարկ գտա: Ես հարցրեցի աշխատակիցներից մեկին, թե որտեղ էր նա և ինձ առաջնորդեցին դեպի հանգստի սրահ: Այնտեղ ես գտա այս բարի այրուն, ում այցելել էին նրա քույրն ու մեկ այլ ընկեր: Մենք միասին հաճելի զրույց ունեցանք:

Երբ մենք խոսում էինք, մի մարդ մոտեցավ սենյակի դռանը՝ վաճառող ավտոմատ սարքից սոդայաջուր վերցնելու համար: Հենց նա նկատեց ինձ՝ ասաց. «Օհ, դուք Թոմ Մոնսոնն եք»:

«Այո»,- պատասխանեցի ես: «Իսկ դուք նման եք Հեմինգուեյին»:

Նա ասաց, որ Ստեֆեն Հեմինգուեյն էր՝ Ալֆրեդ Իջին Հեմինգուեյի որդին, ով ծառայել էր որպես իմ խորհրդական, երբ տարիներ առաջ ես եպիսկոպոս էի, և ում ես կոչում էի Ջին: Ստեֆենն ասաց ինձ, որ իր հայրն այնտեղ էր՝ այդ նույն հաստատությունում, և մոտ էր մահվանը: Ջինը կանչում էր իմ անունը, և ընտանիքը ցանկանում էր կապվել ինձ հետ, սակայն չէր կարողանում գտնել իմ հեռախոսահամարը:

Ես անմիջապես ներողություն խնդրեցի և Ստեֆենի հետ գնացի իմ նախկին խորհրդականի սենյակը, որտեղ հավաքված էին նաև նրա մյուս երեխաները, իսկ նրա կինը մահացել էր մի քանի տարի առաջ: Ընտանիքի անդամները հանգստի սենյակում Ստեֆենի հետ իմ հանդիպումն ընդունեցին որպես մեր Երկնային Հոր կողմից պատասխան իրենց մեծ ցանկությանը, որ ես տեսնեի իրենց հորը նախքան նրա մահանալը և պատասխանեի նրա կանչին: Ես նույնպես զգացի, որ սա էր պատճառը, քանի որ եթե Ստեֆենը չմտներ այն սենյակը, որտեղ ես էի, ճիշտ այն ժամին, երբ նա եկավ, ես նույնիսկ չէի էլ իմանա, որ Ջինը այդ հաստատությունում էր:

Մենք նրան օրհնություն տվեցինք: Իշխում էր խաղաղության հոգին: Մենք հաճելի տեսակցություն ունեցանք, որից հետո ես հեռացա:

Հաջորդ առավոտ հեռախոսազանգը հայտնեց, որ Ջին Հեմինգուեյը մահացել էր իր որդու և իմ կողմից օրհնություն ստանալուց ընդամենը 20 րոպե հետո:

Ես մտքում երախտագիտության աղոթք հղեցի Երկնային Հորը Իր առաջնորդող ազդեցության համար, որը հուշեց ինձ այցելել ծերանոց և առաջնորդեց դեպի իմ թանկագին ընկեր Ալֆրեդ Իջին Հեմինգուեյի մոտ:

Ես կարծում եմ, որ Ջին Հեմինգուեյի մտքերն այդ երեկո, երբ մենք վայելում էինք Հոգու ջերմությունը, խոնարհաբար աղոթում և քահանայության օրհնություն տալիս, արձագանքում էին «Տեր, փոթորիկը մոլեգնում է» օրհներգի բառերը.

Մնա ինձ հետ, օրհնյալ Փրկիչ,
Մի հեռացիր ինձանից,
Եվ ես օրհնյալ ապաստան կգտնեմ,
Երանելի հանգիստ կստանամ:

Ես մինչև այժմ սիրում եմ այդ օրհներգը և վկայում եմ մխիթարության համար, որ այն տալիս է.

Ոչ կատաղի ծովի ցասումը,
չար ոգիները, մարդիկ, ոչ ջուրը
կարող են խորտակել նավը, ուր պառկած է
Ջրերի,երկրի, երկնքի Տերը:
Ամեն բան կհնազանդվի քեզ.
Խաղաղվիր:[1]

Արցունքների և փորձությունների, վախերի և տառապանքների, սիրելիներին կորցնելու խոր վշտի և միայնության մեջ կա վստահություն, որ կյանքը հավիտենական է: Մեր Տերն ու Փրկիչը կենդանի վկա է, որ դա այդպես է:[2] Սուրբ Գրքի Նրա խոսքերը հաստատում են. «Դադարեցէք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած» (Սաղմոս ԽՁ.10): Ես վկայում եմ այս ճշմարտության մասին:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Master, the Tempest Is Raging," *Hymns,* no. 105.
2. Տես Richard L. Evans, "So Let Us Live to Live Forever," *New Era,* July 1971, 18:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Այս ուղերձը կարող է մխիթարել նրանց, ովքեր կորցրել են սիրելիին կամ նրանց, ովքեր տառապում են փորձության պատճառով: Ի լրում Նախագահ Մոնսոնի ուղերձի, խորհեք հետևյալ սուրբ գրություններից մեկով կիսվելու մասին, ելնելով նրանց կարիքներից, ում դուք ուսուցանում եք. Հոբ ԺԹ. 25–26, Ա Կորնթացիս ԺԵ.19–22, Մոսիա 24.13–15, Վարդապետություն և Ուխտեր 122.7–9: Եթե ոգեշնչում զգաք, դուք կարող եք վկայել խաղաղության մասին, որը Տերը տվել է ձեզ ձեր փորձությունների ժամանակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Խնդրում եմ, ամոքիր հոգիս

Քելսի Լեդու

Իմ եղբոր մահվան տարելիցին ես խորհում էի նրա մահից հետո անցկացրած ժամանակի մասին: Ես մտաբերեցի ոչ միայն իմ զգացած մեծ ցավը, այլ նաև օրհնությունները, որոնք Աստված տվել էր ինձ:

Ես երբեք չէի հասկանում, թե ինչպես էին մարդիկ կարողանում ասել, որ սիրելիի մահը կարող էր օրհնություններ բերել: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչպես էր հնարավոր, որ ես ուրախություն և երախտագիտություն զգայի մի բանի համար, ինչն ինձ խորապես ցավեցրել էր: Այնուամենայնիվ, մի գիշեր իմ մոտեցումն ամբողջովին փոխվեց:

Կեսգիշերին ես արթնացա երբևիցե ունեցած ամենածանր զգացողությամբ: Ցավը խեղդում էր ինձ: Ես ծնկի իջա և հեծկլտալով աղոթեցի իմ Երկնային Հորը: Իմ ողջ կյանքի ընթացքում ինձ սովորեցրել էին Քավության և Հիսուս Քրիստոսի հրաշալի բժշկող զորության մասին: Իմ հավատքը փորձվում էր այդ պահին: Ես իսկապե՞ս հավատում էի: Ես խնդրեցի իմ Երկնային Հորը՝ խնդրում եմ, ամոքիր հոգիս: Ցավի զգացողությունը չափազանց մեծ էր այն մենակ տանելու համար:

Ապա խաղաղության, մխիթարության և սիրո մի զգացողություն անցավ իմ ողջ մարմնով: Ես այնպիսի զգացողություն ունեցա, կարծես, Աստված առել էր ինձ Իր բազուկների մեջ և պաշտպանում էր ինձ սաստիկ ցավից, որը ես զգացել էի: Ես շարունակում եմ կարոտել իմ եղբորը, սակայն ես կարողացա այլ կերպ նայել այդ ամենին: Այս փորձառությունից ես շատ բան ունեի սովորելու:

Ես գիտեմ, որ Տիրոջ սերն ու խաղաղությունը հասանելի են: Մենք պարզապես պետք է ճաշակենք դրանք:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ընտրեք հանդարտ լինելը

Նախագահ Մոնսոնն ասում է, որ երբ մենք հանդարտ ենք և ակնածալից, մենք կարող ենք խաղաղություն զգալ և ավելի ամուր վկայություն ձեռք բերել մեր Երկնային Հոր մասին: Եվ Սուրբ Հոգին կարող է ավելի լավ ոգեշնչել մեզ, թե ինչպես կարող ենք օգնել ուրիշներին:

Գրի առեք կամ քննարկեք ձեր ծնողների հետ մի եղանակ, որով դուք կարող եք հանդարտ լինել: Ապա փորձեք այն այս շաբաթ: Այնուհետև դուք կարող եք գրել ձեր օրագրում ձեր ունեցած զգացմունքների և ոգեշնչումների մասին:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12:
Թարգմանության հաստատումը. 6/12: *First Presidency Message, March 2013*-ի թարգմանությունը: Armenian. 10663 201

Ակտիվացում

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, մեզ խրախուսել է «օգնության հասնել և փրկել նրանց, ովքեր ունեն մեր օգնության կարիքը և բարձրացնել նրանց ավելի բարձր և ավելի լավ ճանապարհի վրա: . . . Դա Տիրոջ աշխատանքն է, և երբ մենք Տիրոջ ծառայության մեջ ենք, . . . մենք լիազորված ենք ունենալու Տիրոջ օգնությունը»: [1]

Շատ տարիներ առաջ Լավին Քալը և նրա այցելությամբ ուսուցանելու զուգընկերը այցելեցին քիչ-ակտիվ մի քրոջ: Նրանք թակեցին դուռը և մի երիտասարդ մայր տեսան՝ լոգանքի խալաթը հագին: Նա կարծես հիվանդ լիներ, սակայն նրանք շուտով հասկացան, որ նրա խնդիրը ալկոհոլն էր: Այցելող ուսուցիչները նստեցին և խոսեցին դժվարությունների միջով անցնող երիտասարդ մոր հետ:

Հեռանալուց հետո նրանք ասացին. «Նա Աստծո զավակն է: Մենք նրան օգնելու պարտավորություն ունենք»: Ուստի, նրանք սկսեցին հաճախ հանդիպել: Ամեն անգամ նրանք կարողանում էին տեսնել և զգալ լավ փոփոխություն: Նրանք խնդրեցին քրոջը այցելել Սփոփող Միություն: Չնայած դժկամությանը, նա ի վերջո սկսեց կանոնավորապես հաճախել: Քաջալերումից հետո նա և նրա ամուսինը և դուստրը եկեղեցի հաճախեցին: Ամուսինը զգաց Սուրբ Հոգին: Նա ասաց. «Ես պատրաստվում եմ անել այն, ինչ խորհուրդ է տալիս եպիսկոպոսը»: Այժմ նրանք ակտիվ են Եկեղեցում և կնքվել են տաճարում:[2]

Սուրբ գրություններից

3 Նեփի 18.32, Վարդապետություն և Ուխտեր 84.106, 138.56

Մեր պատմությունից

Նրանց օգնելը, ովքեր մոլորվել են, վերադառնալ Հիսուս Քրիստոսի ավետարանին, միշտ եղել է Վերջին Օրերի Սրբերի և Սփոփող Միության անդամ լինելու մասը: Նախագահ Բրիգամ Յանգն(1801–77) ասել է. «Եկեք կարեկցանքով լցվենք իրար հանդեպ, և թող նրանք, ովքեր կարող են տեսնել, առաջնորդեն կույրերին այնքան ժամանակ, մինչև նրանք ինքնուրույն կկարողանան տեսնել ճանապարհը»:[3]

Էլիզա Ռ. Մնոուն՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, երախտագիտությամբ էր խոսում միմյանց ամրացնելու Օգդեն, Յուտա ԱՄՆ, քույրերի ջանքերի մասին: «Ես քաջատեղյակ եմ, որ մեծ նվիրատվություն է կատարվել, [ինչ վերաբերվում է ծառայությանը], որը երբեք չի գրանցվի [ռեկորդներ] գրքերում», - ասել է նա: Սակայն գիտակցելով, որ երկնային գրառումներ են պահվում քույրերի աշխատանքի վերաբերյալ, երբ նրանք օգնության են հասնում նրանց, ում սրտերը սառել են, նա ասել է. «Նախագահ Ջոզեֆ Սմիթն ասել է, որ այս կազմակերպությունը ստեղծվել է հոգիներ փրկելու համար: . . . Մի այլ գիրք է պահվում ձեր հավատքի, ձեր բարության, ձեր լավ գործերի և խոսքերի մասին: . . . Ոչինչ չի կորչում»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Ծառայության սուրբ կոչումը», *Լիահոնա,* մայիս 2005, 55, 56:
2. Նամակ Սփոփող Միության գերագույն նախագահությանը Լավեն Քալի դստեր կողմից:
3. Բրիգամ Յանգ, *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 107:
4. Էլիզա Ռ. Մնոու, *Իմ արքայության դուստրերը,* 83:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես կարողանո՞ւմ եմ ինքնավստահ կերպով խնդրել քիչ-ակտիվ քրոջը ինձ հետ հաճախել Սփոփող Միության ժողովին:

2. Քույրերը, ում ես այցելում եմ, վստահո՞ւմ են ինձ, որպեսզի հարցեր տան ավետարանի վերաբերյալ:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12:*Visiting Teaching Message, March 2013*-ի թարգմանությունը Armenian. 10663 201